ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Սարչապետ համայնք, գ. Սարչապետ,
Հեռ. (077)867459 , sarchapet.lori@mta.gov.am

N 23-17
06 փետրվար 2017թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ եմ ներկայացնում Սարչապետ համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 31-ի թիվ 04-Ն որոշումը /իր հավելվածով/ և աշխատակազմի քարտուղարի թիվ 04 հրամանը:

Առդիր՝ 7 էջ:

Համայնքի ղեկավար՝ **Բորիս Բարոյան**

Կատ. '

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N-04-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ,ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով, <Տեղական տուրքերի և վճարների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով և <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի գ) ենթակետով՝

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ գյուղական համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Ուժը կորցրած ճանաչել Սարչապետ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 37–Ն, Սարչապետ համայնքի ավագանու 2015 թվականի ապրիլի 01-ի <<Պարտեզ> ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի ծնողական վճարի չափը սահմանելու մասին> թիվ 14-Ա և Սարչապետ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 08-ի <Սարչապետ համայնքում աղբահանության իրականացման կարգի, դրույքաչափերի և ժամանակացույցի մասին> թիվ 45-Ա որոշումները:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ
3. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ
4. ՄԱՐԴՈՅԱՆ ՆՈՐԻԿ
5. ՄԽՈՅԱՆ ՋԱՎԵՆ
6. ՄԽՈՅԱՆ ՍԵՅՐԱՆ
7. ՏՈՄԵՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարչապետ համայնքի ավագանու
2017 թվականի հունվարի 31 -ի թիվ 04-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 4500 /**չորս հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ**,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 9000 /**ինը հազար/ ՀՀ դրամ,**
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15 000 /**տասնհինգ հազար/ ՀՀ դրամ**,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15 000 /**տասնհինգ հազար/ ՀՀ դրամ**,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30 000 /երեսուն **հազար/ ՀՀ դրամ**.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 900 /**ինը հարյուր/ ՀՀ դրամ**,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 /**մեկ հազար հինգ հարյուր/ ՀՀ** դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 900 /**ինը հարյուր/ ՀՀ դրամ**,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն

հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 1500 /**մեկ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ.**

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100 000 /**մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ**.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30 000 /**երեսուն հազար/ ՀՀ դրամ.**

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 15 000 /**տասնհինգ հազար/ ՀՀ դրամ.**

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **7000 /յոթ հազար/ ՀՀ դրամ,**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 100 /**տաս հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ,**
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **15 000 /տասհինգ հազար/ ՀՀ դրամ,**

և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21 000 /**քսանմեկ հազար/ ՀՀ դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26 000 /**քսանվեց հազար/ ՀՀ դրամ,**
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50 000 /հիսուն հազար/ ՀՀ **դրամ.**

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **3000 /երեք հազա/ ՀՀ դրամ,**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 100 /**տաս հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ,**
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **15 000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ,**
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21 000 /**քսանմեկ հազար/ ՀՀ դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26 000 /**քսանվեց հազար/ ՀՀ դրամ.**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ**.

համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350 /**երեք հարյուր հիսուն/ ՀՀ դրամ՝** մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ **դրամ**,
բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 /**հիսուն հազար/ ՀՀ դրամ**,
գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 /**երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ**,
դ. խաղատների համար՝ 500 000 /**հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ,**
ե. շահումով խաղերի համար՝ 300 000 /**երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ**,
զ. վիճակախաղերի համար՝ 100 000 /**հարյուր հազար/ ՀՀ դրամ**.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **1000/հազար/ ՀՀ դրամ,**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 /**վեց հազար/ ՀՀ դրամ,**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 11 000 /տասնմեկ հազար/ ՀՀ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16 000 /**տասնվեց հազար/ ՀՀ դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 21 000 /**քսանմեկ հազար/ ՀՀ դրամ**,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 31 000 /**երեսունմեկ հազար/ ՀՀ դրամ.**

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500 /հինգ հարյուր/ ՀՀ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1100 /մեկ **հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ,**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2100 /**երկու հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ**,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4100 /**չորս հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ**,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8100 /**ութ հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ,**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15100 /**տասնհինգ հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ.**

13) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 /**երկու հազար/ ՀՀ դրամ**,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 /**երեք հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ**,

գ. սոցիալական գովազդի համար՝ 0 /զրո/ ՀՀ դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500 /**հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ**,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ 375 /երեք հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամ,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով՝ 150 /մեկ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ.

14) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50 000 /հիսուն **հազար/ ՀՀ դրամ**.

15) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10 000 /**տասը հազար/ ՀՀ դրամ**.

16) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 150 000 /**մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ**.

17) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 750 000 /**յոթ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ,**

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 1 500 000 /**մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ,**

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2 100 000 /**երկու միլիոն մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ**,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 3 000 000 /**երեք միլիոն/ ՀՀ դրամ**

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ << դրամ,

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ << դրամ,

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝1500 /մեկ հազար հինգ հարյուր/ << դրամ,

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝1000 /մեկ հազար/ << դրամ,

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 /մեկ հազար/ << դրամ,

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝1000 /մեկ հազար/ << դրամ,

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը՝

ա.կենցաղային աղբի համար՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար վճար՝ ամսական 50 /հիսուն/ << դրամ,

բ. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 1000 /մեկ հազար/ << դրամ,

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճար՝ ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի մեկ խորանարդ մետրի համար սահմանված դրույքաչափի 20 %-ի չափով՝ 200 / երկու հարյուր/ << դրամ,

9) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց ՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ << դրամ,

10) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 500 /հինգ հարյուր/ << դրամ փոխհատուցման վճար:

Աշխատակազմի քարտուղար՝ Անժելա Մարտիրոսյան
(Անուն, ազգանուն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Սարչապետ, (077)867459, sarchapet.lori@mta.gov.am

Հ Ր Ա Մ Ա Ն

31 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 04

ԱԼԻՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով Ալինա Վաղինակի Առաքելյանի անձնական դիմումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Ալինա Վաղինակի Առաքելյանին ընդունել աշխատանքի Սարչապետի համայնքապետարանում որպես մեքենագրուհի, նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր և աշխատավարձը սահմանել ըստ հաստիքացուցակի:

2. Աշխատանքի մեջ համարել 2017 թվականի փետրվարի 1-ից:

3. Սույն հրամանն ուժի մեջ է՝ ստորագրման պահից:

Աշխատակազմի քարտուղար՝ **ԱՆԺԵԼԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2017 թ. հունվար 31
գ.Սարչապետ